

100 Ապա յԱրապը եւ Մաղբուղըն առաւել էին աշխարհն այն, զի սահմանակիցք են. եւս առաւել Սպանիոս. եւ չկայ տուն մի, որ երկուս, իրեք սեւ յարապ քօլա չլինի. որ դարձել են եւ ուղղափառ քրիստոնեայ եղել. զոր ի ճա-
 105 նապարհին բազմաց հանդիպեալ տեսնէաք, զի երթային ուխտք բոկ ոտամբք, ոմն սուրբ Յակոբ, այլք եզր Աստուածածին, ըստ օրինի ընտաւորաց՝ ցուղ ի ձեռին եւ մաշկեակ յուս եւ ի դուխս նշան, մեծաւ հաւատով եւ
 110 սիրով եւ յուսով գնային: Հաղար փառք Աստուծոյ, զի թէպէտ քրիստոնեայք դառնան ի հաւատոց վասն իւրք փորձանաց կամ պատահարաց կամ ճօրով եւ դարպով, այլ միշտ սիրան առաջին հաւատն է. իսկ արապին
 115 կատարեալ քրիստոսեանք են:
 Եւ ունի Փափն երկու մեծ կալիօն կէմի, որ ամէն ամի ընու մարդով եւ ուղարկէ յերուսաղէմ. զպաշարն, գինին եւ գայլ խարճն Փափէն է. ով ուզէ՝ կ'երթայ:

FIorenza

Կայր սահմանակից Փափին եւ մերձ կրան-
 5 Տուքայ Ֆլորենս, որ է մեծ գուքս: Եւ զի սա յոյժ մեծարի եւ քաջ է, զօրաւոր եւ յաղթող եւ յաջողակ ի պատերազմի եւ երանէ ի վե-
 10 րայ ծովու եօթն դասրդով միայն, բայց մեծամեծօք. եւ այնպէս հնարաւորք են, որ բազում անգամ մինչեւ ի Պօղոս-հիտար եւ մերձ Ստամպուլայ կղզիքն մասնեն, աւար հարկա-
 15 նեն եւ գերեալ տանին: Այլ եւ ի վերայ ծովու գորս եւ դասնեն թուրքաց նաւս, զնաւս ընկղմէին, զինչս առնուին, զմարդիկն գերի վարէին, զորս ի սուր ձգէին, զորս ի սուր մաշէին. այլ եւ ծովեղերաց գիւղս եւ քաղաք քանդէին. եւ վաճ ի եղուկ անէին այլազապ.
 20 Բայց զքրիստոնեայս անվնաս արձակէին. զի յոյժ տեղեակք են մարտի ծովու քան ցամաքի:
 Եւ ունէր սա ի քաղաքն Ֆլորենս տէֆղարով Սի հոգի Էսարթ թուրք, զայիմնի, շափուշնի, դատիք եւ այլ մեծ գլխներ, անթիւ
 25 ենիկչարիք, սրահիք, այլ եւ կանայք, չօրվաճիք, բէյկիք եւ փարթամ վաճառականք, սրոց զին է գրեւ եւ պօման թէ շուտով դան եւ գնեն՝ ազատին, ապա թէ ոչ՝ ձգէ գնոսա ի դատրդան կամ տաշկէմին եւ զխառնիճա-
 30 զանճն երկաթի շղթայիւք տայ ի գործ եւ աշխատանս, քար հատանել կամ հող կրել, որ-

110 ուսով: — 111 թէպէք: — 8 յատար: — 11 գմարդիքն: — 15 յանվնաս: — 25 սա:

պէս Ստամպուլ փայգանին: Եւ շինած էր մեծ գետնափորք եւ մաղարայք լայն եւ արձակ. զիչերն անդ արդելուին եւ ցորեկին բանեց-
 30 նէին: Եւ իւր քաղաքին սարայք, եկեղեցիք եւ պարիսպք եւ այլ յորով չէնք նորօք շինին. եւ ամէն տասն հողոյ տասնապետ կայ. զի յորժամ հանեն խորափրակն եւ տանին ի բան, երթալն մեծ ձայն, հնչումն եւ չնդումն լինի շղթայից եւ երկաթից, մինչ մարդիկ զունկն
 35 խնուն: Եւ այլ իշխանք, պարոնայք՝ յորժամ կամին եարու ինչ շինել կամ բերթ կամ պարիսպ, ի սմանէ խնդրեն որչափ կամին, Ռ, Բի կամ այլ աւելի. եւ սա առաքէ ոմանց զբամով, այլոց վասն պարդեաց: Են եւ այլ
 40 տուքայք, որ եւ նոքա ունին յորով գերիք. սոպա սորա նման շունին. վասն այն կրան տուքա կոչի, որ է մեծ գուքս:

ՆԱԻԱՏԱՐՄԻՂ ԳՐԱՄԻՆ ՄԱԼԹԱՅԻ

Եւ Մալթայու տուքան ալ շատ կտրուկ է եւ պատերազմող եւ հզօր. եւ նա գնայ մերձ
 45 Ստամպուլայ կղզիքն, բազում օճիր եւ վնաս զործելով քաղաքաց, գիւղից եւ կէմոց: Եւ այն տարին որ մեք անդ (էաք), Մալթայու կէմի մեծ հանին ի վերայ ծովու իրրեւ գլեռ մի Գձ թօք ունէր, ժի էլքան եւ Ռ ձէնքճի,
 50 Գձ կէմիճի: Եւ բոլորն կէմուն խանտակ էր շինած եւ մէջն հող լցած. երկու խուրճ լայն, որ ոչ թօք, ոչ թուֆաք կարէր անցնիլ յինքն, այլ սահէր եւ անկանէր Փնտրին ի ծով. զի էր իրրեւ զպարիսպ: Եւ ասին թէ երեսուն
 55 ամն հազիւ կատարեցաւ. զոր Տէր Աստուած նահաւոր անէ եւ յաղթող ի վերայ թէնա՝ մեաց խաչին Քրիստոսի. ամէն եւ եղիցի:

Եւ այլ բազում իրս, բանս եւ գործս, չէնք եւ կարգ ու սահմանք տեսաք եւ լուսք
 60 աշխարհն այն, զոր սակաւս ի բազմաց զրեցաք բազում աշխատութեամբ, սիրով ընթերցողացք եւ յուսով ունկնդրողաց: Բայց ազաջմ մի՛ հեղզալ եւ մի ձանձրանալ ձեզ՝ ապախտ առնելով գերիս վաստակոց իմոց.
 65 զոր երբեմն ի կէմին, երբեմն ի վերայ գրաստի, երբեմն ի ջեւանս եւ խաներն նստեալ գրէի. այլք ուտէին, ըմպէին եւ այլ յիրս գարձանային. եւ ես հոգ տարեալ այսմ իրի ջանայի՛ ի լրումն հանել զառաջարկեալ գիրս.
 70 զի յօգուտ եւ շահաւէտ լիցի ուխտաւորաց եւ շրջող անձանց: Եւ այս բաւ է իմաստնոց. ողջ լերուք:

29 բանեցնէ: — 35 մարդիք: — 41 տուքաք: — 46 յօճիր: — 52 լցաք: — 65 գյերկս: — 70 կիրս:

ՄԵԿՆՈՒՄՆ ԶԱՔԱՐԻԱ ՎԱՐԳԱՊԵՏԻ
 Իսկ յեա եօթնամսոյ մեծ խոռովութիւն եւ
 75 չլիթ անկաւ Զաքարիայ վարդապետին հետ իւր հարեղից՝ վասն լիբր եւ անզգամ կնոջ մի որ շրջէր ընդ նոսա, կոյս եւ հաւատար ա-
 նուանելով զինքն, մինչ չար համբաւս այս եհաս ականջս Փափին, զոր հրամայեայ նոյն
 80 աւուրն երանել Հոռոմայ. եւ էր ծաղկազարգին շարաթն: Գրեցին թուղթ հոգեւոր տիրոջն Մեղիսեթին. զի նարմէ՛ էր առաքեալ. եւ երկու զէրպապ շուռջառ իւր սարօք եւ
 85 թաղ մի. այլ եւ փոքր խաչ մի ոսկի եւ մէջն մասն ի խաչափայտից եւ Բձ մարչիլ երեսօք խարճի: Զոր (Զաքարիա) մեծ փառք եւ պա-
 90 դեւք աննկոց էր Փափէն եւ կարանայայ. եւ զատիկն տեսնելոց էր. ամենայնք զրկեցաւ եւ մերժեցաւ: Քանզի ամենայն ոք վասն դատ-
 95 կին գան ի Հոռոմ. զի զատիկն լինին չէնլիքնի եւ ամենայն ոսկերք եւ նշխարք սրբոց եւ անորինականք Քրիստոսի ցուցանի եւ տեսնի. նա զատիկ մերձ գոլով եւ անտի եւ
 գնաց՝:

(Շարունակելի:) Հրատարակեց Հ. Ն. ԱԿՆԵԱՆ



90 զատնին:
 1 Այսինքն՝ ի նմանէ:
 2 Զաքարիա վանեցի, որ Մեղիսեթի կաթողիկոսն պատուիրակ զրկուած էր Պօղոս Ե. Քահանայապետին, Հոռոմէն մեկնեցաւ 1612 Մարտ 27ին (Ծաղկազարդ): Հասնելով Կ. Պոլիս ընտրուեցաւ պատրիարք, հեռացնելով աթոռէն Գրիգոր Կեսարացին: Պօղոս Ե. Քահանայապետ 20 Հոկտեմբեր 1613 թուակիր նամակին մէջ կը գրէր առ Զաքարիա. «Իսկ ինչ որ կը գրես թէ հոգ տարած ես զրկելու առ յարգելի եղբայրն մեր Մեղիսեթի՛ Մեծաց Հայոց Կարողիկոսը, մեր նամակն զը մեր ձեռքէն առած էիր, եւ առք համար ձեր ազգէն երկու եպիսկոպոս նամոց զրած ես մեր ընծաներով, այս ամէնք կարի հաճելի եղաւ մեզ»: Տմտ. Կաթողիկէ Արձագանք, 1913, էջ 507—508: Այսպէս նաեւ առ Գևազան Գաղղոյ թղթին մէջ կը գրէր նոյն Քահանայապետ նոյն թուականով. «Մեր մեծարց կըրօր Մեղիսեթիկի՛ Հայոց մեծաց Պատրիարքին մեզի գրեալ պատուիրակը՝ սիրելի որդին մեր Զաքարիա վարդապետ, տեղեկացուց մեզ, որ անցեալ տարի (1612), երբ Հոռոմէն կը վերադառնար ի Հայաստան, Կ. Պոլիս հասնելով, եպիսկոպոսներէն, քահանաներէն ու իւր ազգին ժողովրդեանէն եկեղեցույ առաջնորդ կարգուած է»: անդ, էջ 551: Կը տեսնուի ասկէ, թէ Սիմէան Լեհացոյ տողերը ունին հաւատարմութիւն:

ԽՈՅԹ - ԲՈՆԱՅԷՆ ԳԵՂԵՄԻՆԵՐԸ
 ՌԻԶԵԻՈՐԱԿԱՆ ՏԵԳԵԿԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ
 (Շարունակութիւն:)

8.
 Հարաւային եւ արեւելեան Հայաստանի մէջ տեսած չեմ մի ուրիշ պատմական մե-
 նաստան կամ յայտնի ուխտատեղի, որ ունէ կերպով նմանի Ս. Աղբերեկի վանքին: Ինձ ծանօթ եղածների մէջ որոշ նմանութիւն եւ ոճի մերձաւորութիւն չը յայտնաբերէ Ապա-
 10 լանից Ս. Սաչ վանքը, ասոր պէս թառած դժուարամերձ բարձունքների վրայ՝ Ապարան եւ Սիդան գաւառների սահմանամերձ: Յոյժ աննկարաչանակ եւ նախնական կառուցուածք է Ս. Աղբերեկի վանքը, ցածր ու մութ,
 15 խոնաւ, խորհրդաւոր եւ առաջին մուտքին՝ անարկու: Բաց ի սպիտակ եւ հայկական ճարտարապետութեան դասական ոճը ներկայացը-
 նող դմբեթէն, որ վեհօրէն կը տիրապետէ վանքին բովանդակ շրջափակին վրայ, մենաստանը չունի ունէ արտաքին տեսք կամ նիւ-
 20 թական գրաւչութիւն: Բուն մատուցը եւ տաճարների շարքերը ունին ճիշտ միւսեւոյն մակերեսն, ինչպէս վանականների խուցերն եւ ուխտաւորների վերապահուած՝ 70ի չափ սենեակներ, որոնց մեծ մասը այժմ խարխը-
 25 լած ու անբնակելի դարձած է:

Մատուցի գլխաւոր դուռը կը բացուի վանքի քառակուսի դաւիթին վրայ: Մուտքի չեմք կազմող քարը՝ կարծր որձաքարի կող-
 30 աօրէն յղկուած մի քառակուսի է: Դուռը շինուած է ամուր փայտէ, հաւանաբար երե-
 նոսէ, թէեւ ոչ մի կերպով նման Մշոյ Ս. Օհաննու վանքի դրան զեղարուեստական զործուածքին ու հնութեան:
 Փոքրիկ ու ցածր է դուռը, մատուցը մտնելու համար խոնարհեցի դուխս: Գմբէթի ապակույ նեղ պատուհաններէն ներս թափան-
 35 ցող լոյսը հազիւ կը լուսաւորէ տաճարների կենդրոնական խորանը եւ մատուցի առաջա-
 մասը: Թեւերն ու մուտքի մասը թաղուած են յաւիտեանական մթութեան մէջ: Արարողու-
 40 թեան ժամանակ ի հարկէ կը վառեն մոմ եւ ձիթալուղի սոցոս ջահեր: Երկու թեւերը կազմուած են երկու շարք կոշտօրէն կոփուած քարէ սիւներով, որոնք խոնիրխուռն կը յա-
 45 ուղանան մինչեւ տաճարների երկու շարքը: Սիւների շարքերը թերհատաձեւ կը կոթնին հարաւային եւ հիւսիսային պատերին կազմե-

լով կամարակապ ուղիներ դէպի տաճարները : Մուտքի դրան ճիշտ հակադիր արեւելեան պատին կը կանգնին երկու շարք տաճարներ : Երկրին շարքը կը բաղկանայ երեք տաճարներէ նուիրուած՝ Ա. սուրբ Փրկչին, Բ. սուրբ Հոգւոյն եւ Գ. սուրբ Աստուածածնին, իսկ արտաքին շարքը՝ բաղկացած երկու տաճարներէ, նուիրուած է Ս. Կարապետին եւ Ս. Ստեփանոսին : Միաձեւութիւն կամ համաչափութիւն գոյութիւն չունի : Մատուռը սալայատակուած է ամէն ձեւ ու չափ ներկայացնող սալերով, խորանի առջեւ ծածկուած խորի կտորներով : Մատուռին սպասեղէններն ու վարագոյրները ողբալի վիճակ կը ներկայացնեն : 1895ի խոռվութիւններէ ժամանակ բաղադրի քերտ աշխրէթը կողոպտեց վանքի թանկարժէք հնութիւններ, սպասներ եւ հանդերձեղէն, սպաններով նաեւ այն ժամանակուան Վանահայր Ղազար Վարդապետ եւ երկու հովիւ-պահապաններ : Այժմ բառ առ բառ կ'արտագրեմ մի քանի սող օրագրութիւնէս . «Այնչափ խորունկ ու հոգեյոյց սպաւորութիւն մը թողուց վրաս այս մատուռը, որ ծունկի չօքեցայ խորանին առջեւ եւ բոլոր մը ինքնամփոփ օրհնեցի յիշատակն այն մարդկանց, որ իրենց արեան գնով կանգուն պահած են այս Մենաստանը : Իր հնարոյր շինուածքով ու բարձրահայեաց դիրքով վանքը թրթուացուց սրտին ամէնէն զգայուն լարերը : Ասոր ծագումը պարուրուած է առասպելական եւ դիցարանական մշուշներու մէջ : Այս կոշտ քարերն անգամ ցոյց կու տան մեր նախնայրերու կրօնական ջերմեռանդութիւնն ու հաւատքը . . . » : Ինչպէս պիտի տեսնէ ընթերցողը այն ժամանակ մի քիչ բանաստեղծ էի՝

Վանքի առժամեայ Վանահայրը մեկնած էր դէպի Մանազկերտ եւ Բուլանրի գաւառները, վանքին հինաւուրց թեմերը, «պողի» եւ նուէր հաւաքելու : Գլխաւոր տնտեսը Պր. Սեհոն (Սեհեքերիմ) սիրալիր կերպով ողջունեց ինձ : Խնդրեցի իրմէ արտօնել ինձ վրան կանգնելու Մատուռին հանդիպակաց ուխտատուներէ սենեակաշարքի կտուրին, որ դէպի արեւմուտք կը հայէր Տորոսի հմայիչ բարձունքներին : Վանքի գաւիթը լեցուն էր արօտավայրէն վերադարձած ոչխարներով, կոմ վերով եւ ուլերով : Մի ամեհի գամբո արքայանման բազմած տաճարի դրան կից սալայատակին, երկար ու ուշադիր դիտեց ինձ եւ

շարժումներս, մի քանի անգամ մոլորաց եւ փորձեց յարձակիլ : Սակայն տնտեսի միջնորդութեամբ բարեկամացաւ հետս երբ իրեն մատուցի մի կտոր շաքարահաց : Ետըս հաւաքուեցան վանքին տիրացուն՝ Պր. Առաքել, նախկին աշակերտ Ս. Կարապետ վանքի ժառանգաւորացին, տնտեսն ու պահապանները : Հակառակ իմ թախանձանքին բերին վանքին անմահական ու մաքուր մեղր, թանձր, չոր սեր, ամէնէն համեղը երբ եւ իցէ ճաշակած եմ այլուր : Վանականները շատ սիրեցին եւրոպական անուշեղէն եւ թէյ : Տնտես Սեհոն ունէր մտախոհ երեւոյթ եւ պատահար կը հառաչէր : Պատմելէ յետոյ Չաքարիա վարդապետի սպանութեան հանգամանքները, որի մտերիմն ու դորձակիցն եղած էր մի քանի տարիներէ ի վեր, աւելցուց . «Ի՞նչ պիտի ըլլի էս աշխրի հալը : Հալա երկու ամիս ա Ռարաթու հուրմարի մօտ Եղիկցի քուրտ զարկաւ երեք զարթիւր ու տարաւ դալլթու թվանքնիր : Ելէ երկու ամիս ա դավլարթ չի բոնի էգ քուրտ զարմիր» :

Խոհական տնտեսին համար պետութեան ոյժն ու ազդեցութիւնը ունէր մեծ արժէք վանքի սպահնութեան համար . ընդհակառակն պետութեան թուլութենէն աւելի երես պիտի առնէին քերտեր եւ վանքն աւելի պիտի տուժէր : Յորդորեցի զինքը լինել շրջահայեաց եւ ամէն կերպով շահիլ Բագրանցոյ Մամատ Աղայի եւ իր գաւակների վստահութիւնը, որոնց պիտի այցելէի ես (տես վարը) : Վանքն ունէր երկու հայ եւ երկու քերտ զինուած կտորիճ պահապաններ՝ սահմանադրութենէն ի վեր : Սակայն եթէ վանքն ի վիճակի լինէր պահել տանեակ անգամ աւելի զինուած պահակներ, զարձեալ անհնարին կը լինէր պաշտպանել վանքի սեփականութիւնը, երբ հօտը պարտ էր իջնել Բոնաչէնի դաշտն ու եայլաներ եւ կամ բարձրանալ Տորոսի բարձունքները :

Ամպերը տակաւ խտացան երկնակամարի վրայ եւ վանքը խորասուզուեցաւ մի զարդանդեցնող մթութեան մէջ : Մուտքի դրան վրայ եւ դաւիթի մէջ կը վառին ձէթի երկու աղօտ լամբարներ, որոնք այս լեռնային մենութեան մէջ հեռուէն դիտողին կու տան մի սարսուցնոյ խորհրդաւորութիւն : Վանքի շրջափակէն անջատուած, բայց շատ մօտ կայ ախոռը, ուր կը պահուին ձիեր, եզներ եւ լծկան անասուններ ի մի մասը :

Ծալապատիկ նստած վրանի առջեւ վանքի թաղիքին վրայ խմեցինք թէյ գաւաթ գաւաթի ետեւէ : Մինչ ես կը ճգնէի ամէն կերպով խօսակցութիւնը կենդրոնացնել վանքի պատմութեան եւ աւանդութիւնների վրայ, այս պատուական հայ մարդիկ կարճ կը կապեն խօսքն եւ կը վերադառնան հողային, զինուորական խնդիրներին եւ կը հարցնեն երկրի սպառազայի մասին : Սովորաբար ուժեղ քամիներ անպակաս են Տորոսի այս բարձունքների վրայ : Սկսեց մի պող հոսանք հիւսիսէն : Վանքի անմիջական շրջակայքը, բացի հիւսիս-արեւմտեան կողմէն՝ լեռի ու գուրկի է ծառերէ : Սակայն պատէն 20 մէտր հեռու կը սկսին բարձրանալ Տորոսի ամպածրար կատարները, մի շրթայ հսկած մի ուրիշ գաղաթի վրայ եւ ծածկուած խիտ անտառներով : Քամին կը շայ եւ կը շէտ հեռաւոր անտառների միջով եւ մի խուլ բամբուկի տպաւորութեամբ կ'արձագանգէ դէպի հարաւ Բոնաչէնի դաշտը : Բացի միապաղաղ անտառներից, թաղուած խոր մթութեան մէջ, ուրիշ ոչինչ կարելի էր նշմարել յստակօրէն : Երջակայքի մէջ կենդանութեան շունչը զգալի էր մօտաւոր կամ հեռաւոր անասունների բառաչով, պատահար շունների հաչոցով եւ պարբերաբար պահապանների ոտնաձայնով, այլապէս Ս. Աղբերեկի վանքը կախուած երկնքի եւ երկրի միջեւ ինձ թուեց մի ուլասիս աշնանային այս ամպոտ երկնքի տակ : Ժամը 8½ մրափեցի՝ հմայուած Տորոսի այս բարձունքների պատճառած գոհունակութենէն :

Առաւօտեան ժամը 6ին (Սեպտ. 14. Դշ. 1910) զանգակների ներդաշնակ զօղանջը արթնցուց ինձ : Աստուած իմ, ի՞նչ հոգեպարար եւ յուզող երաժշտութիւն է : Ղօղանջի արձագանգը կը զրնգայ Տորոսի ալիքաւոր բարձունքների մէջ, եւ կարծես համակենդրոն ծաւալումով կը բախի Խոյթի եւ Բոնաչէնի բլուրներէն անդրադարձող արձագանգներին, կազմելով ամէնէն ներշնչող համերգը : Այժմ կը զգամ թէ այս զօղանջը ի՞նչպիսի հաւատք եւ ջերմեռանդութիւն ներշնչած է այս առնական գիւղացիութեան : Լսած էի զօղանջները Ս. Էջմիածնի, Վարազայ, Անձեւացեաց Հոգւոյ վանքի կամ Մշոյ Ս. Կարապետի զանգակներին, սակայն Տորոսի այս ծերպերի մէջ Ս.

¹ Անկից մի քանի ամիս առջ հայ եւ ուրիշ քրիստոնէայ զինուորներ առաջին անգամ լինելով կանչուեցան զէնքի տակ եւ այս կուսակալութեան հայ զինուորներն ուղարկուեցան Մակեդոնիա եւ Թիւրքիոյ արեւմտեան նահանգները :

Աղբերեկի զօղանջը կ'արձագանգէ հարեւաւոր մղոններով հեռու : Ամէն առաւօտ կայ մի կարճ ժամերգութիւն . զանգակը աղբանջանն է նաեւ օրուան կեանքի սկզբնաւորութեան, թէեւ ժամը 5էն ի վեր ոտքի էին ամէնքը : Վաղեցի ժամերգութեան եւ ներկայ եղայ վերջին քառօրէին : Առաջին հոգս եղաւ առատօրէն խմել Ս. Թաղէի աղբուրի սքանչելագործ ջուրը : Երջակայէն 30 քայլ դէպի հարաւարեւելք վայրահակ բլուրի կողքին ժայռերի միջով կը հոսի հոշակաւոր աղբուրը, որի ջուրը խմողը կը բժշկուի ամէն հիւանդութիւններէ եւ ախտերէ : Թիւրքեր եւ քերտերն էլ մի հաւատք ունին այս աղբուրի բժշկագործական կարողութեան վրայ . շատ հեռուներէ քերտեր կու գան բժշկուելու² : Ետ պող ու գուլալ է ջուրը եւ ըստ ամենայնի հանքային տարրերի մի խտունորդ : 1907ի այցելութեան Դիարբէկի ճիւղատոս Մր. Հըրդ մի մեծ շէշ վերցուց այս ջուրէն ուղարկելու Եւրոպա վասն վերլուծման . սակայն դժբախտաբար այս բարձունքներէն դէպի Տարօնի դաշտը իջնելու ժամանակ ջուրին զարնուեցաւ մի ժայռի եւ կտորեց շէշը :

Ժամերգութենէն յետոյ ման եկայ մատուռին մէջ (ինչպէս նկարագրած եմ վերեւ) . տաճարի հիւսիսային պատին յենած տեսայ մի բեւեռաղիւր արձանագրութիւն, մի քառակուսի տաշուած քար . երկու երեսներն ու կողերը լեցուած խիտ արձանագրութիւններով : Այն ժամանակ չգիտէի արժէքը այդ բեւեռաղիւրին, անկասկած այդ արձանագրութիւնը պէտք է լինի խաղիական-ուրարտական (տես վար) : Բնականաբար ուշադրութիւնս գրաւեց արձանագրութեան ճակատին բեւեռաղիւրի վրայ քանդակուած հետեւեալ հայերէն արձանագրութիւնը .

ԻԳՆԱՏԻՈՍ Վ. ՅԾԲ.
այն է վերկշական 903 տարին : Թէեւ հանգուցեալ Վաղէմար Բէլք այցելած է Խոյթ 1898ին, բայց կը թուի թէ հանդիպած չէ Ս. Աղբերեկի վանքը³, այլապէս անհնարին է որ նա չի՛շէր այդ :

Այժմ կ'արտագրեմ օրագրութիւնէս . «Տե-

² Աղբային աւանդութիւններն ու զրոյցները այս աղբուրի մասին տեսնել Հ. Ն. Սարգիսեան, Տեղագրութիւնք, էջ 239 :
³ Ուշադրութեամբ քննելով Աէլսի, Նիկիոսիի, Լէյման-Հաուպտի եւ այլոց թարգմանած եւ յիշած բոլոր Խաղի բեւեռաղիւրը, ո եւ է ակնարկութիւն չգտայ Ս. Աղբերեկի այս արձանագրութեան : Ինձ կը թուի որ պղ քարը ցարգ անձպիթ մնացած է գիտութեան :

ասած չէի աւելի գեղեցիկ արշալոյս քան տա-
ճարի տանիքէն աչքիս առջեւ պարզուող ա-
րեւելքը: Միաժամանակերս եւ վառիվառ ցոլքե-
րու մէջէն արեւը դուրս կ'ընէ նոսր ամպերու
մէջէն. եղեամի թանձր խաւ մը ծածկած է
ամենուրեք: Գիշերուան ցուրտը տակաւ կը
մեղմանայ. դէպի արեւելք եւ հարաւ Սոյթի
եւ Բոնաչէնի հովիտները ծածկուած են մշուշի
թանձր խաւով, որոնք այս բարձունքէն դի-
տողին վրայ կը թողուն ամպապատ ծովի
ապաւորութիւն: Դէպի արեւմուտք եւ հիւսիս
վանքը չունի ո եւ է հորիզոն, բայց ի Տորոսի
ամպածրար կատարները, որոնք թեւատարած
կ'ընեն մօտ երեք ժամ հեռու Սասունի առա-
ջին հովտին, այսինքն Շատախին: Դէպի հա-
րաւ Բոնաչէնի դաշտն, հորիզոնը կորած է
այն շրթային մէջ որ Մօտկանն եւ Բոնաչէնը
կը բաժանէ բուն Աղձնիքի հովտէն (ներկայ
Պարզան գաւառը): Դէպի արեւելք իմ առ-
ջեւ է Սոյթի հովտն Մօտկանէն բաժանող
անկարգ ու խառնիխուռն Մօտկանի լեռանց
երկայնաձիգ շրթան, որի հարաւ-արեւելեան
ծայրին՝ Բաղէշ քաղաքէն երեք ժամ հեռու
կը ցցուի Նպատի ամենհի կոթողը, սեւ որձա-
քարէ բաղկացած ողորկ եւ լերկ սիւնը, բա-
ռին տառական իմաստով¹: Ասոնցմէ ալ աւելի
դէպի արեւելք կ'երեւին մշուշն մէջ տարա-
ծուած Սիդանի լեռանց մարմրուն կատար-


¹ Տեղագրական յոյժ բարդ խնդիր է Նպատ ա-
նունի գոյութիւնը Մօտկանի մուտքին: Մի եղանակն ա-
ւանդութեամբ Բաղէշի մեր հայրենակիցներ Նպատ
կանուանեն քաղաքէն երեք ժամ հեռու դէպի հարաւ-
արեւելք սեան պէս ցցուող այդ ամենհի ժայռը, որ կը
կանգնի Բիւլիս-տուի եւ Մօտկանի միջեւ: Մտարբոնի
Նիֆաքէս լեռնէն կը համապատասխանէ այդ կոթո-
ղին: Կը թուի որ Մտարբոնի թիւրիմացութիւնը հայկ.
աւանդութեան Նպատի մասին դիւրաւ կարելի է բա-
ժանութիւններով: Ինձ անհետկանալի պատճառներով
Բաղէշցիք պահած էին Մտարբոնի աւանդութիւնը,
ընդգէմ Բագրեւանդի պատմական Նպատ լեռան: Հին
հայկական տեղանունաց կցած իր հոյակապ քարտեղին
մէջ Հիւրըման դրած է Ձիւղիւրա Դաղ ճիւղտ այդ կէ-
տին վրայ՝ Բաղէշէն արեւմուտք Սոյթի եւ Մօտկանի
մուտքին: Հաւաստի եմ, որ Հիւրըման կը սխալի
այդ նոյնացման մէջ: Եթէ Հիւրըման թիւրք զիմացե-
ղուած Ձիւղիւրա Դաղով կ'անկարկէ հայկ. Ծիրնիկատար
լեռան, այդ պարագային նա պէտք էր դնէ Միւրնիկա-
տար լեռը կենդրոնական Սասունի մէջ: Թիւրք վարչու-
թեան Ձիւղիւրա Դաղ անուանած սրածայր կատարը
կը գտնուի Բաղէշէն դէպի Սոյթի տանող ճանապարհին
կէսին: 1908ի Յունուարին Սոյթիի այցելութեան ժա-
մանակ, անցայ պայէս կոչուած Քէսէր-ու (Տատիկի
դեա), բարձրացայ Ձիւրնիկոս լեռանցքը: Չախ թեւիս
դէպի Բէրվարի եւ Սիդան տանող արահետներին կային
երկու կատարներ, մէկը կոչուած Ձիւղիւրա, միւրը
Հարաբոլ, մի աւելի երկար շրթայ տանող դէպի Հաբ-
բարի, ընկնէր կ'անուանէին դայն Բարամբս դաղ:
Այլ մանրամասնութիւններ ուրիշ առթիւ:

ները»: Փոխն ի փոխ ամբայած այս բար-
ձունքների վրայ՝ մեր Պորխոունի, Մամի-
կոնեան, Արծրունի եւ Բաղրատունի իշխան-
ները դարերով տիրապետած եւ վայելած են
այս սքանչելի երկիրը եւ ներշնչուած անոր
հմայքներէն: Վանականները հաւատացին, որ
արծիւներ առատ են իրենց շրջակայքը. այսօր
Բոնաչէնի դաշտին մէջ տեսայ երկու հատ,
որոնք թեւաբայ հսկայ թռչուններ՝ անդորր
ու անխոռով կը պարէին օդին մէջ:

Թէ վանականների եւ թէ գաւառի զիւ-
ղացիների մէջ դեռ հարազատօրէն կը վերա-
պրին վանքին հիմնարկութեան հին աւանդու-
թիւնները, թէ վանքը հիմնուած է Ս. Թադէոս
առաքեալի ձեռքով եւ թէ Սոյթ-Բոնաչէնի
տէր Բոնիկ իշխանը վանքը օժտած է առատ
նուէրներով եւ ճոխ սպասներով:

Ինձ կը թուի որ Բոնիկ անունը հայա-
ցուած մերձեցումն է նախահայկական մի
ընտանիքի ընտանիքի: Անանիա Շիրակացի
պահած է մի յոյժ հետաքրքրական եւ ստու-
գարանօրէն մի թանկագին տեղիք: Նա որո-
շապէս կը գրէ, որ Ս. Աղբերեկ է վանտեր:
Հաթեան եւ ասորական հնագոյն բեւեռագրերի
լոյսին տակ համարելով վանտերի նախա-
հայկական կապակցութիւնները՝ դուրս բե-
րած եմ Պարտի պետութեան կաղմակերպու-
թեան մէկ դրուագը: Առ այժմ թողլով այդ՝
պէտք է ընել մի պարզ ենթադրութիւն՝ հիմ-
նուած զուտ հնչարանութեան վրայ: Ինձ կը
թուի, որ Բոնաչէն անունն իսկ կաղմուած է
Բոնիկ իշխանադարմի անունէն, եւ ունի զուտ
տեղական դարձածութիւն. հաւանաբար այդ
պատճառաւ էլ Բոնաչէն տեղանունը մուտք
դրած չէ հին հայկական աշխարհագրութեան
դասական տեղացուցակին մէջ:

(Շարունակելի:) Ա. ՍԱՅՐԱՍՏՆԱՆ



ՅՈՎ Հ ԱՆՆԵԹ ԱՅՎ Ա ՉՈՎ Ս ՊԻ
Ժ Ո Վ Ա Ն Կ Ա Ր Ի 2

ԻՐ ԿԵԱՆՔԻՆ ՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՆՈՒԹԻՒՆԵՐ

(Շարունակութիւն:)

ԺԸ.

ԸՆԿԵՐԱՅԻՆ ՄԱՐԴԻՆ ԵՒ ԲԱՐԵՐԱՐԸ

Մեզի ծանօթ են արուեստագէտներ, մեծ
գիտնականներ եւ հանճարներ, որոնք իրենց
համբաւին հետ չեն միացուցած ընկերական
եւ բարեգործ մարդու անունը: Անոնց կեն-
սագրութեան էջերէն կը պակսի այսօր այն,
ինչ որ կը հայի արուեստագէտին իբր «ընկե-
րային ու բարերար մարդու»: Մենք արուես-
տագէտ մը այն ատեն միայն ամբողջ մարդ կը
նկատենք, երբ իր արդար հոգակին հետ կը
համբնթանայ լաւ մարդու բարի համբաւը:

Ուրախ ենք մենք, որ Այվազովսկիի մէջ
բացատրիկ տաղանդի հետ կը գտնենք ազնիւ
եւ զգայուն սիրտ մը, որուն շնորհիւ աղքատն
ալ, թշուառն ալ ունեցաւ իւր պաշտպանն եւ
կարեկիցը:

Իբր ընկերային մարդ այնպէս կ'ախորժէր
Այվազովսկի խօսակցել թշուառներու հետ,
ինչպէս արքունիքի մեծամեծներու հետ: Ու
թէ ինչո՞ք այդ մէջ չկար աղքատ մը, որ չըլլար
բարի նկարչին մօտիկ, որ չունենար համար-
ձակութիւնը բարեխաւ անոր դուռը: Անկիս
հայրն էր աղքատներուն. իր հողին կը տան-
ջուէր, երբ կը լսէր ընկերին վիշտը, երբ կը
տեսնէր անոր արտասուքը:

Այվազովսկիի վշտակցութեան, նոյն իսկ
անոր ականդիքէն կաթող անցունքին ակա-
նատես եղած է Թ. Պանոյեան, որուն են խօս-
քերս. «Տողբրիս դրողը շատ անգամ էր նկա-
տում, թէ ինչպէս արցունքներ էին ցայտում
ձերունու աչքերից, երբ թիւրքահայը յուզ-
ված պատմում էր իր քոյրերի առեւանգման
եւ որդիների կոտորման մասին: Հանդուցեալը
տանջվում էր, տեսնելով որ չէ կարողանում
օղնել իր համարին եղբայրներին եւ միայն
յոյս էր տալիս ասելով. Դուք աշխատեցէ՛ք
նորից ձեր հայրենիքը վերադառնալ, ծագ-
կեցրէ՛ք ձեր արիւնքը դաշտերը... Մի յու-
սահատվէք, աշխատեցէ՛ք. երեւի մի օր կը
պարզվի մութ հորիզոնը եւ կը տեսնէք պայ-
ծառ արշալոյս... ա՛խ... Եւ նրա մօտից

հանդիսառ ու անդորր սրտով դուրս էր գալիս
խեղճ Թիւրքահայը»¹:

Այվազովսկիի սէրն ու գուժը դէպի
թշուառներն ընդհանուր էր. ան կը տարա-
ժուէր բոլոր մարդկութեան վրայ, առանց
ազգի եւ կրօնի խտրութեան: Պետերբուրգի
Վեդոմոստի թերթը կը գրէր. «Թէպէտ հայ-
րենասէր հայ էր, բայց միեւնոյն ժամանակ
հետեւ էր իրմէ մոլեռանդութիւնը. պատ-
րաստ էր անիկա օգնելու ամէնուն խօսքով,
գործով եւ խորհուրդով. կ'ընդառաջէր ա-
մէնուն, որոնք կը բախէին անոր սրտի դուռը,
առանց կրօնի եւ ազգի խտրութեան»²:

Թէ որչափ սէր ունէր դէպի հայ ժողո-
վուրդը, երեւան կը բերեն այն ցուցահան-
դէաները, որոնց արգելները կը հուսէր բարեգոր-
ծական նպատակներուն: Մեր աչքի առաջ ու-
նինք անոր յուզիչ մէկ նամակը, զոր մահու-
նէն երկու ամիս յառաջ կ'ուղղէր Վեհ. կա-
թողիկոսին (16 Փետր. 1900). իր բարեխօ-
սութեամբ խնդրելու կաթողիկոսին հաւանու-
թիւնը, որպէս զի Պորէն եպիսկոպոս վերա-
դառնայ իւր մեկուսացրէն քաղաք եւ կա-
րենայ գործել իւր եռանդովը ժողովրդեան
մէջ, շեշտելով որ պէտք ունի ժողովուրդը
այսպիսի անձի մը առաջնորդութեան «իրենց
մտքերն լեզուն սովորելու, իրենց եկեղեցին
պաշտելու, ազգային քրիստոնէական պարտ-
քերը ճիշտանալու համար»³:

Ոչ միայն նիւթական ու բարոյական ա-
ջակցութիւն կը ցուցնէր կարօտեալին, այլ
նաեւ կը հետեւէր յաճախ անոր պարագանե-
րուն բարեխաւութեան. վասն զի բարեգործու-
թիւնն իր գաղափարով այն ատեն միայն
իմաստաւոր կ'ըլլար, երբ տեսնէր թէ տեսա-
կան արդիւնքով կը պսակուէր:

Նուազ օգտաբեր չէր իր առատաձեռն
բարեգործութիւնն նաեւ թերազրած խոր-
հուրդներով: Կը գրէ Գ. Բաշինջաղեան. «Կար-
ծեմ 1882ին էր, որ դիմեցի նրան Պետերբուր-
գում, իբր Ակադէմիայի ուսանող. եւ նա ինձ
բարի խորհուրդներ տալուց յետոյ՝ առաջար-
կեց մի-մի անգամ այցելել իրան, որպէս զի
ներկայ լինեմ աշխատութեան միջոցին»⁴: Ու
մենք գիտենք, թէ ո՞րչափ օգտակար եղան իր
խորհուրդները երիտասարդ Բաշինջաղեանին

¹ Մշակ, 1900, թ. 82:
² Մշակ, 1900, թ. 79:
³ Նամակն ամբողջութեամբ տես Մշակ, 1900,
թ. 90:
⁴ Մշակ, 1900, թ. 97: